

Արագածոտնի մարզպետի ընդունելությունը՝ Ապարանի տարածաշրջանում

21.03.2014

Մարտի 21-ին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը Ապարանի քաղաքապետարանում քաղաքացիների ընդունելություն կազմակերպեց Ապարանի տարածաշրջանի բնակիչների համար:

Մարզպետի հետ հանդիպման եկան ինչպես Ապարան քաղաքից, այնպես էլ գյուղական համայնքներից՝ Լուսագյուղից, Վարդենուտից, Ափնայից, Արագածից, Հարթավանից, Արայից, Քուչակից, Ձորագլխից, Չքնաղից, Շենավանից, Ծաղկաշենից, Կայքից եւ այլ գյուղերից:

Մարզպետն, ընդհանուր առմամբ, ընդունեց 47 բնակչի: Նրանք մարզպետին դիմեցին ամենատարբեր՝ դրամական աջակցության, բնակարանային, բժշկական օգնության, առողջարանի ուղեգրերի, սոցիալական, գազիֆիկացման եւ կենցաղային ու անձնական այլ հարցերով:

36 քաղաքացու տրվեց դրամական օգնություն: Բավարարվեց նաեւ 5 դիմումատուի պետապատվերով բուժման, 4-ի՝ առողջարանի ուղեգրերի դիմումները: Հարցերից մի մասի լուծումները դրվեցին ընթացքի մեջ, կատարվեցին նաեւ անհրաժեշտ պարզաբանումներ: Մարզի տարածաշրջաններում քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման շրջանակում մարզպետը մարտի 28-ին կայցելի Արագածի տարածաշրջան: